այնպես չէր ձեռնարկել այդ գործը, մանավանդ որ՝ այդ ժամանակ արդեն ուներ «հրատարակչական աշխատանքի շուրջ յոթ տարվա փորձ ու հմտություն»[17], իսկ Դավրիժեցու պատմագիրքը Ոսկանի հրատարակած թվով տասնյոթերորդ գիրքն էր[18]: Նա, անկասկած, տեղյակ էր այն հետաքրքրության մասին, որ տածվում էր Դավրիժեցու աշխատության հանդեպ և գիտեր, որ հրատարակում է 17-րդ դարի պատմագրության ամենամնայուն արժեքը:

Այնուհետև Առաքել Դավրիժեցու և նրա «Գիրք պատմութեանց» աշխատության մասին գնահատանքի ու արժևորման խոսքեր, վկայակոչումներ ու հղումներ հանդիպում ենք նրան հաջորդած պատմագիրների ու ժամանակագիրների երկերում: «Չկա Դավրիժեցու «Պատմությունից» հետո հայ պատմագրության մեջ հանդես եկած շատ թե քիչ խոշոր որևէ երկ, որտեղ XVII դ. առաջին կեսի պատմական իրողությունների նկարագրման համար լայնորեն օգտագործված չլինեն Դավրիժեցու հաղորդած տեղեկությունները»[19],– գրում է Լորետա Դանեղյանը:

Այդ երկերում միևնույն ժամանակ սկսում է իր դրսևորումներն արձանագրել նաև Դավրիժեցու պատմագրքի գործառնականությունը, և սկսում է գործել նաև նրա «օգտակար գործողության գործակիցը», հասկացություն, որը Զավեն Ավետիսյանի կարծիքով՝ «մշակութային հուշարձանի գնահատման, արժեքավորման նոր չափանիշ ու մոտեցում է»[20], որի պարագային կարևորվում է այն, թե ինչ չափով և ինչ կերպ են հաջորդող ժամանակներում օգտվել տվյալ մշակութային հուշարձանից: Առաջիններից մեկը

---

17 ***Հրաչիկ Միրզոյան***, Առաքել Դավրիժեցու Պատմության առաջին հրատարակության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, թիվ 2, էջ 190:

18 Տե՛ս ***Ռաֆայել Իշխանյան***, Հայ գրքի պատմություն, հատոր 1, Երևան, 1977, էջ 530:

19 ***Լորետա Դանեղյան,*** Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, էջ 34-35:

20 ***Զավեն Ավետիսյան***, Խորենացին մշակույթի գիտակցության մեջ, էջ 3: